



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՆՈՐ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Նոր Արմավիրի գյուղապետարան

N 07

«26» «01» 2015թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ  
պարոն Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ՝

Ձեզ է ներկայացվում ՀՀ Արմավիրի մարզի Նոր Արմավիրի գյուղական համայնքի  
ղեկավարի տարեկան գործունեության հաշվետվությունը:

Առ դիր 3 - - - - թերթ:

Համայնքի ղեկավար՝  Կ. Գրիգորյան



# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կայացած 22.01.2015թ.

Գ. Նոր Արմավիր

### Օրակարգ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Արմավիրի գյուղական համայնքի ղեկավարի երկրորդ կիսամյակի և տարեկան գործունեության հաշվետվությունների մասին:

Նախագահությամբ՝ Կ.Գրիգորյանի  
Քարտուղարությամբ՝ Ե.Մարտոյանի

Նիստին մասնակցում էին մարզպետարանի մշակույթի և սպորտի բաժնի պետ՝ Արմեն Թովմասյանը, ավագանու վեց անդամները, գյուղապետարանի ողջ անձնակազմը և համայնքի թվով 48 անդամներ:

Ձեկուցումով հանդես եկավ համայնքի ղեկավար Կարեն Գրիգորյանը: Համայնքի ղեկավարը մանրամասնորեն ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքների, ինչպես նաև բացթողումների մասին:

Համայնքի ղեկավարին տրվեցին բազմաբնույթ հարցեր, որոնց տրվեցին սպառիչ պատասխաններ:

Նոր Արմավիր համայնքի ղեկավար՝ Կ.Գրիգորյան

Քարտուղար՝ Ե. Մարտոյան





Արմավիրի մարզի Նոր Արմավիր  
համայնքի ղեկավարի տարեկան  
գործունեության հաշվետվություն  
(2014թ.-ի հունվար-դեկտեմբեր ամիսների)

**Քաղաքացիների իրավունքների պաշտպանության բնագավառում**

2014թ. հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում գյուղապետարան է դիմել համայնքի թվով 636 բնակիչ, որից 102-ը գրավոր, դիմումատուների հարցերին տրվել է լիարժեք պատասխան: Ընտանեկան նպաստի համակարգում կատարվել է 32 ընտանիքների ընդգրկման փաստագրման աշխատանքներ, ստացվել և առաքվել է թվով 98 շրջաբերական: Գյուղապետարանը նոտարական գրասենյակում, Ք.Կ.Ա.Գ.-ի բաժնում, անձնագրային բաժնում, կադաստրի տարածքային ստորաբաժնում 42 անգամ միջնորդությամբ հանդես է եկել համայնքի բնակիչների օրինական շահերը պաշտպանելու նպատակով:

Աշխատակազմի միջոցով կազմակերպվել և անցկացվել է համայնքի բնակչության ամենամյա սեռատարիքային հաշվառում, կատարվել է ամենամյա համայնքապատկան հինարկներում գույքագրման աշխատանքներ:

Աշխատակազմի միջոցով կազմակերպվել և անցկացվել է ամանորյա միջոցառում համայնքի երիտասարդության հետ:

Կայացել է համայնքի ավագանու 6 հերթական և 1 արտահերթ նիստ, որոնք ներկայացվել են մարզպետարան:

**Ֆինասների բնագավառում**

Կազմվել և համայնքի ավագանու հաստատման է ներկայացվել համայնքի տարեկան բյուջեի նախագիծը, օրենքով սահմանված կարգով ապահովել և տնօրինել է համայնքի բյուջեի մուտքերը և նպատակային օգտագործումը: Հաշվետու ժամանակահատվածում հավաքագրվել և մուտքագրվել է գույքահարկի մասով 3308100 դրամ, հողի հարկի մասով 4735000 դրամ և վարձակալական հողի մասով 273100 դրամ: Գյուղապետարանը աշխակազմի աշխատակիցների աշխատավարձերի, սոց վճարների և եկամտահարկերի գծով գյուղապետարանը հաշվետու ժամանակաշրջանում ոչ մի պարտք չունի:

Հաստատվել է համայնքի 2015թ. բյուջեն՝ ա/ եկամուտների գծով՝ 38214800 դրամ  
բ/ ծախսերի գծով՝ 38214800 դրամ

## Պաշտպանության բնագավառում

Գյուղապետարանը տարածքային զինկոմիսարյատից ստացած ծանուցագրերը ժամանակին հասցնում է հասցեատիրոջը և հետևում է, որ ժամանակին ներկայանան զինկոմիսարյատ: Ձինծառայությունից խուսափողների թիվը հասցվել է գրոյի,ինչպես նաև աշխատանքներ է տարվում նախկինում զինծառայությունից խուսափողների հայտնաբերման և զինկոմիսարյատ ներկայացնելու գործում:

Աջակցվում և ուշադրության կենտրոնում են պահվում պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծումը: Աշխատանքներ են տարվում երիտասարդության շրջանում ռազմահայրենասիրական դաստիարակության գործում:

## Քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառում

Տրվել է համայնքի սեփականություն հանդիսացող հողերից վարձակալությամբ,որոնք նույնպես համապատասխան որոշումներով ներկայացվել են նուտարական գրասենյակ, կադաստրի բաժին և ստացել համապատասխան ձևակերպում:

Անմիջական վերահսկողություն է սահմանվում համայնքի հողօգտագործողների նկատմամբ տարածքները նպատակային օգտագործման ուղությամբ:Մասնագետների մասնակցությամբ տրվել է անվճար խորհրդատվություն բույսերի պաշտպանության հարցում:

## Կոմունալ տնտեսության և բարեկարգման բնագավառում

Համայնքում կատարվում է աղբահեռացում, որի համար կնքվել է աշխատանքային պայմանագիր մեխանիզատորի հետ:Կնքվել է պայմանագիր սանիպիտոկայանի հետ խմելաջրի որակի աղտորաշման նպատակով: Խիստ հսկողություն է սահմանվել գյուղապետի կողմից խմելաջրի խողովակաշարի վրա կատարված վթարների և նրանց վերացնելու ուղությամբ: Կատարվել է խմելաջրի քլորացման աշխատանքներ:

## Տրանսպորտի բնագավառում

Գյուղապետարանի կողմից կատարվել է մասնակի ավագապատման և հարթեցման աշխատանքներ:



## Առևտրի և սպասարկման բնագավառում

Առգելվել է փողոցային առևտուրը:

Հսկողություն է սահմանվել արագ փչացող սննդի և առևտրային կանոնների խախտման նկատմամբ, ինչի մասին պարբերաբար տեղեկատվություն է ներկայացվում մարզպետարան:

Բացառվել է փողոցային վառելանյութի վաճառքը:

## Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և սոցիալական ծառայության բնագավառում

Բուժ անձնակազմի և գյուղապետարանի մասնակցությամբ հսկողություն է սահմանվել խմելաջրի վթարների, խորքային հորերի քլորացման և կենցաղային աղբի հեռացման հարցում: Համաճարագների կանխարգելման նպատակով կատարվում է ամենօրյա բակայցեր և տարվում բացատրական աշխատանքներ: Համայնքում հրավիրվում են բժիշկ մասնագետներ ազգաբնակչությանը ստուգելու, համապատասխան անվճար բուժումներ և խորհուրդներ տալու նպատակով:

Սոցիալապես անապահով 82 ընտանիքների տրվել է 2460000դրամ օգնություն:

## Գյուղատնտեսության բնագավառում

Աշխատակազմի միջոցով կազմակերպվել և վիճակագրական վարչություն է ներկայացվել համայնքում անասնազխաքանակի հաշվառման ամենամյա աշխատանքներ:

Տարածքային վիճակագրական վարչություն է ներկայացվել հունիսյան ցանքաշրջանառության, ինչպես նաև առկա գյուղտնտեսիկայի հաշվետվությունները:

Համայնքում համաձայն գրաֆիկի կազմակերպվում է անասունների և թռչունների հակահամաճարակային պատվաստումներ:

Նոր Արմավիր համայնքի ղեկավար՝



Կ.Գրիգորյան